

Վաղարշապատ քաղաքի: 15 Առեալ զգունդն Վաչէ, եւ յանկարծակի յարծակեցաւ ի վերայ քաղաքին, եւ մատնեաց զնոսա Տէր ի ձեռս Նորա:

16 Եւ իբրեւ տեսին զնա յարծակեալ ի վերայ իւրեանց, փախեան ելին ի քաղաքէ անտի յառապարն ի կողմս յԱւշական բերդին. եւ զանապատն, եւ զքարուտ տեղիսն ապաւեն իւրեանց համարեցան. եւ լինէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ: 17 Եւ Նիզակակիցք զաւրավարին Յայոց, որ էին Բագրատ Բագրատունի, Մեհունդակ եւ Գարեգին ընդտունիք, եւ Վահան Նահապետն Ամատունեաց տոհմին, եւ Վարազ Կամինական, հասանէին հարկանէին սատակէին զաւրսն Ալանացն, եւ Մազքթացն, եւ Յոնացն եւ զայլոց ազգացն, եւ լնուին զդաշտն առապարացն առհասարակ դիակամք մեռելոց. մինչ զի իբրեւ զգետ յարուցեալ երթայր արիւնն անհնարին, եւ ոչ լինէր թիւ զաւրացն մեռելոց: 18 Եւ զմնացեալսն սակաւս առաջի իւրեանց հալածականս տանէին մինչեւ յաշխարհն Բաղասճաց, եւ զգլուխն Սանեսանայ մեծի թագաւորին եկին բերին առաջի արքային Յայոց: 19 Սակայն իբրեւ ետես, լալ սկսաւ. ասէ, Եղբայր իմ էր ազգաւ Արշակունի: 20 Ապա եկեալ էր արքային ի տեղի ճակատուն, եւ ընդ Նմա մեծ եպիսկոպոսապետն Յայոց. եւ տեսին զկոտորածն զաւրացն հարելոց, զի Նեխէր երկիրն ի հոտոյ մեռելոցն: 21 Ապա ետուն հրաման՝ զուզազ հանել յաշխարհէ, եւ անդէն ծածկել քարակարկառ վիմաւք, զի մի՛ ի շարաւոյ հոտոյն մեռելոտի ոսկերացն երկիրն պղծեսցի: 22 Եւ դադարեաց երկիրն ի խաղաղութեան ամս հարուստ մի. եւ այսպէս վրէժ սրբոյն Գրիգորիսի ինդրեցաւ ի թագաւորէն Սանեսանայ, եւ ի բանակէ Նորա. զի ոչ մնաց ի Նոցանէ եւ ոչ մի:

ԳԼՈՒԽ Ը.

1 Յաղագս մայրեացն տնկելոց, եւ պատերազմացն ընդ Պարսս, եւ ազգահատութեան տան Նախարարացն տոհմին Բզնունեաց:

2 Եւ իբրեւ առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Յայոց, ապա ետ հրաման թագաւորն Յայոց Խոսրով, տալ պարգէս արանցն քաջացն՝ որ վաստակեցին Նմա, եւ փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Յայոց մեծաց յամենայն ի մարտ ճակատուցն պատերազմաց: 3 Եւ ետ Վաչէի զաւրավարի զականս Չանջանակին, եւ զԶրաբաշխիս, եւ զՅլու գլուխ, ամենայն զաւառակաւքն հանդերձ. Նոյնպէս եւ այլոց Նախարարացն մեծամեծ պարգէս: 4 Եւ ետ հրաման թագաւորն զաւրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, եւ բերել զվայրենի կաղին մայրեաց, եւ տնկել զայն յԱյրարատեան գաւառին. եւ առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչեւ ի դաշտն Մեծամարի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի